

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ (ՕՖԵՐՏԱՅԻ) ՄԱՍԻՆ

1. Հիմնական հասկացություններ

1.1. Օֆերտա- «Թել-Սել» ՓԲԸ-ի տերմինալների միջոցով վճարումներ կատարելու հրապարակային առաջարկ՝ հասցեագրված ցանկացած անձի:

1.2. Ակցեպտ- Հաճախորդի կողմից պայմանագրի պայմանների լրիվ և անվերապահ ընդունում:

1.3. Ծառայություն մատուցող- կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր, որը «Թել-Սել» ՓԲԸ-ի հետ կնքել է համապատասխան պայմանագիր:

1.4. Վճարող- ծառայություններ մատուցող(ներ)ի օգտին վճարումներ կատարող՝ սույն Պայմանագրի պայմանների համաձայն:

1.5. Վճար - Ծառայություններ մատուցող(ներ)ի օգտին կատարվող վճար՝ մատուցված ծառայությունների դիմաց:

1.6. Տերմինալ- ավտոմատ ինքնասպասարկման սարքավորում, որի միջոցով ընդունվում են կատարված վճարումները:

2. Ընդհանուր դրույթներ

2.1. Սույն Պայմանագիրը հանդիսանում է հրապարակային օֆերտա (այսուհետ՝ «Օֆերտա»)՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի:

2.2. Օֆերտան արտահայտում է «Թել-Սել» ՓԲԸ-ին պատկանող տերմինալների միջոցով սույն Պայմանագրում նշված պայմաններով կատարված յուրաքանչյուր վճարում ընդունելու ընկերության կամքը և պարունակում է Պայմանագրի բոլոր էական պայմանները:

2.3. Նախքան տերմինալի միջոցով վճարում կատարելը Վճարողին անհրաժեշտ տեղեկատվություն.

- 2.3.1. ընձեռվում է վճարման հնարավորություն՝ հոգուտ այն ծառայություններ մատուցողների, որոնք ներկայացված են տերմինալի մոնիտորին,
- 2.3.2. վճարողն ունի ծառայություններ մատուցողների ընտրության հնարավորություն,
- 2.3.3. տրամադրվում է տերմինալից օգտվելու պարզ և մատչելի ուղեցույց,
- 2.3.4. ապահովվում է բաժանորդների հաշիվների մասին անհրաժեշտ լիարժեք տեղեկատվություն (ոչ բոլոր ծառայություններ մատուցողների վերաբերյալ),
- 2.3.5. ապահովվում է կատարված վճարման (գործարքի) փաստաթղթային հաստատում՝ անդորրագրի տրամադրմամբ,
- 2.3.6. Վճարողն իր ցանկությամբ կարող է աջակցություն ստանալ տերմինալից օգտվելու, կատարած սխալ գործողությունները շտկելու հարցում,
- 2.3.7. վճարելիս գանձվում են միջնորդավճարներ, որոնց չափը յուրաքանչյուր տերմինալում նշված է յուրաքանչյուր վճարի համար՝ կոնկրետ ծառայություն մատուցողի վերաբերյալ:

3. Վճարողի գործողությունները

3.1. Telcell տերմինալի միջոցով հոգուտ ծառայություններ մատուցողի վճարում կատարելը համարվում է Վճարողի կողմից «Թել-Սել» ՓԲԸ հրապարակային առաջարկի (**օֆերտա**) լիարժեք և անվերապահ ընդունում (**ակցեպտ**)՝ այդ ուղղությամբ գործողությունների կատարմամբ, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի: Տերմինալի միջոցով վճարում կատարելու յուրաքանչյուր փաստ առանձին գործարք է, որն իրականացվում է՝ օֆերտայում նշված պայմանների համաձայն:

3.2. Վճարողը պարտավոր է ուսումնասիրել և հետևել տերմինալի շահագործման ուղեցույցին: Վճարողի կողմից ուղեցույցով չնախատեսված գործողություններ կատարելը կարող է դառնալ վճարումը չընդունելու հիմք: Պայմանագրի պայմաններին չհամաձայնելու կամ ուղեցույցի պահանջները չհասկանալու դեպքում Վճարողն իրավունք չունի օգտվել տերմինալից: Վճարողն իրավունք ունի զանգահարել «Թել-Սել» ՓԲԸ թեժ գծի անվճար հեռախոսահամարով՝ 060272222, և ստանալ վճարումը կատարելու համար անհրաժեշտ պարզաբանումներ ու տեղեկատվություն:

3.3. Վճարողը պարտավոր է պահպանել վճարման դիմաց տրամադրված անդորրագիրը:

4. Ծառայությունների արժեքը

4.1. Ծառայությունների արժեքը սահմանում է «Թել-Սել» ՓԲԸ-ն՝ Վճարողի և ծառայություն մատուցողին ուղղված վճարի տոկոսային հարաբերակցությամբ կամ հաստատուն գումարի չափով, որը տերմինալի միջոցով տեղեկացվում է Վճարողին՝ տերմինալից օգտվելիս, նախքան վճարման մասին նրա որոշում ընդունելն ու կատարելը:

4.2. Ծառայությունների կատարման և վճարման փաստը հաստատվում է վճարման վերաբերյալ տրամադրված անդորրագրով:

5. Հատուկ պայմաններ

5.1. «Թել-Սել» ՓԲԸ-ն իրավունք ունի ժամանակավորապես դադարեցնել իր կողմից մատուցվող ծառայությունները:

5.2. «Թել-Սել» ՓԲԸ-ն պատասխանատվություն չի կրում ոչ իր մեղքով առաջացած՝ Վճարողի վնասի համար: «Թել-Սել» ՓԲԸ-ն պատասխանատվություն չի կրում ծառայությունների մատուցման լրիվ կամ մասնակի ընդհատումների համար, որոնք առնչվում են սարքավորումների կամ ծրագրային ապահովման փոխարինմանը կամ այլ աշխատանքներին՝ ծրագրերի կամ սարքավորումների աշխատունակության պահպանման կամ արդիականացման նպատակով:

5.3. Վճարողն իրավունք ունի վճարումից (գործարքից) բխող բողոք-պահանջները ներկայացնել «Թել-Սել» ՓԲԸ-ին, ինչպես նաև Ֆինանսական համակարգի հաշտարարին: Պահանջն ընդունելու, քննելու և որոշում կայացնելու կապակցությամբ Ֆինանսական համակարգի հաշտարարը հաճախորդից որևէ վճար չի գանձում: Մանրամասն տեղեկատվությունը բերված է վեճերի լուծման բացատրական ամփոփագրում, որին կարող եք ծանոթանալ «Թել-Սել» ՓԲԸ պաշտոնական կայքում՝ www.tel-cell.am:

5.4. Սույնով հայտնում ենք, որ «Թել-Սել» ՓԲԸ-ն Ֆինանսական համակարգի հաշտարարի հետ չի կնքել վերջինիս որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր:

5.5. «Թել-Սել» ՓԲԸ-ն կարող է փոփոխել վճարումների ընդունման ծառայությունների մատուցման պայմանները, որոնք ներկայացվում են ի գիտություն Հաճախորդին (Վճարողին)՝ մինչև վճարում կատարելու պահը, յուրաքանչյուր տերմինալի միջոցով:

5.6. Սույնով Վճարողը տալիս է իր համաձայնությունը՝ առ այն, որ «Թեյ-Սեյ» ՓԲԸ-ին իրավունք է վերապահում վճարների և «Թեյ-Սեյ» ՓԲԸ-ի մատուցած ծառայությունների վերաբերյալ իր բջջային հեռախոսահամարին ուղղարկել համապատասխան SMS հաղորդագրություն:

5.7. Սույն պայմանագրի՝ այլ լեզուներով ներկայացված տարբերակների և հայերեն տարբերակի միջև անհամապատասխանության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

6. «Թեյ-Սեյ» ՓԲԸ վավերապայմաները

Անվանում՝

«Թեյ-Սեյ» ՓԲԸ

Հասցե՝

ՀՀ, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8

Հեռախոս՝ +374 60 27 22 23

Բանկային տվյալներ՝

«Յունիբանկ» ՓԲԸ, ՀՀ, ք. Երևան,
Հ/Հ՝ 241002057040 AMD ՀՎՀՀ՝ 02703102

Ղեկավարի անուն, հայրանուն, ազգանուն՝ Արամ Արմենի Ազատյան